գութիւնն 'ի վերայ Աստուածատուր Եպիսկոպոսի ։ Ապա դարձ արարեալ անտի եկին 'ի վանս, եւ նստուցին զԱստուածատուր յաթոռ Պատրիարքութեան, 'ի Ռէճէպ ամսոյ, ՋԼԹ (1532) ։ Զայս ամենայն առեալ թարգմանեցաք 'ի նոյն յետկարէ, որպէս ասացաք ։ Ահա այսպիսի եղանակաւ կատարէին զփոփոխութիւն Պատրիարքաց 'ի նմին ժամանակի, այլ թէ փոքր ինչ յառաջ եւս որպէ՞ս առնէին, չէ յայտ ։ Լատին կրօնաւորք, ոմանք բանտարկեցան յԵրուսաղէմ, և ոմանք վարեալ 'ի Դամասկոս եդան անդ 'ի բանտի, և մնացին ամս 3 . և ամիսս 3 . և 'ի նոցանէ անձինք 8 մեռան 'ի բանտի ։ (1537) ։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Ծռազատիկ ։ Պարխաշ Երուսաղէմի ։ Անդրէաս Պատրիարք ։ Վէճ ընդ Յունաց ։ Գերեզման Ս. Աստուածածնի ։ Պատանատեղին Քրիստոսի 'ի Ս. Յարութեան ։

Ի ԺԱՄԱՆԱԿՍ իշխանութեան Աստուածատուր Պատրիարքի Մարտինցւոյ, դարձեալ պատահեցաւ խոտորումն Զատկի, որպէս պատահէր յառաջագոյն, զորոց գրեցաք 'ի նախընթաց գլուխս, և եղեւ մեծ և խռովութիւն սաստիկ 'ի մէջ միաբանացն Հայոց և Յունաց եղելոց յԵրուսաղէմ, Հայք կարի 'ի նեղ անկեալ դիմեցին 'ի դուռն Օսմանեան, և 'ի դատարանէ Մահմուտ Փաշայի առին մուրհակ. առանձին կատարել զտօն Պասեքին, զի Յոյնք յայսմ ամի տօնեցին 'ի 6 Ապրիլ, իսկ Հայք, 'ի 13 նոյն ամսոյ ։ Յոյնք զչարեալ այսմ յարուցին աղմուկ մեծ, և առիթ եղեն հանդիպելոյ Հայոց մեծամեծ վնասուց և նեղութեանց, և արկանել երկպառակութիւն 'ի մէջ ժողովրդոց, թէ Զատիկն Հայոց ոչ եղեւ ըստ նախնական սովորութեան, զի Լոյսն զորմէ ասէք, եւ այն յառաջագոյն վասն մեր, և այլ սոցին նման բանք անտեղիք, և իբրեւ ետես Աստուածատուր թէ՝ Յոյնք առաւել նեղեն եւ հարստահարեն զժողովուրդ իւր բռնութեամբ, ազդ արար դատաւորի քաղաքին, Իսկ նորա յա-